ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին»

Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ ներկայացված առաջարկությունների

Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	**Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը**	**Առաջարկություն (փոփոխություն, լրացում)**	**Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը**	**Առաջարկությունները ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը**
ՀՀ կառավարություն	1. Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածիով առաջարկվող՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքում լրացվող 928.9-րդ հոդվածի 4-րդ մասից հանել «(սոցիալական ապահովության հաշիվը բացելու)» բառերը:	Ընդունվել է, նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Հանձնաժողովն առաջարկությունն ընդունել է
	2. Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածով առաջարկվող՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքում լրացվող 928.8-րդ հոդվածի 3-րդ մասում «հաշվին գումարները մուտքագրելու ամսվան հաջորդող» բառերը փոխարինել «հաշիվ բացելու համար անհրաժեշտ տվյալները բանկին փոխանցելու ամսվանից հաշված՝» բառերով:	Ընդունվել է, նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Հանձնաժողովն առաջարկությունն ընդունել է
	3. Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածով առաջարկվող՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքում լրացվող 928.8-րդ	Ընդունվել է, նախագծում կատարվել է համապատասխան	Հանձնաժողովն առաջարկությունն ընդունել է

		հոդվածի 1-ին մասը «կրող» բառից հետո լրացնել «(այդ թվում՝ որոշակի ժամկետով տրվող)» բառերով:	փոփոխություն:	
	4. Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածով առաջարկվող՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքում լրացվող 928.9-րդ հոդվածի 1-ին մասը «կրող» բառից հետո լրացնել «(որոշակի կամ անորոշ ժամկետով տրվող)» բառերով:	Ընդունվել է, նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Հանձնաժողովն առաջարկությունն ընդունել է
	5. Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածով առաջարկվող՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքում լրացվող 928.8-րդ հոդվածի 2-րդ մասը «ցանկը» բառից հետո լրացնել «, միանվագ դրամական վճարների հաշվին մուտքագրելու միջոցով վճարվող գումարները» բառերով:	Ընդունվել է, նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Հանձնաժողովն առաջարկությունն ընդունել է
	6. Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածով առաջարկվող՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքում լրացվող 928.9-րդ հոդվածի 2-րդ մասը «ցանկը» բառից հետո լրացնել «, սոցիալական ապահովության հաշվին մուտքագրելու միջոցով վճարվող գումարները» բառերով:	Ընդունվել է, նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Հանձնաժողովն առաջարկությունն ընդունել է